**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03**
**ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/22 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ**

**ք.Արտաշատ**
**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ** **«15» «ապրիլ» 2026թ.**
**ժամը՝ 10:00**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**
Բուժական գծով փոխտնօրեն — Աղասի Մախտեսյան

**Անդամներ՝**
Հաշվապահ — Հասմիկ Սահակյան

Դեղագործ — Սոֆի Գևորգյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Մենեջեր ֆինանսական բնագավառում — Հասմիկ Մկրտչյան

**ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաստատեց նիստի հետևյալ օրակարգը՝
1. Տեղեկատվություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2.Տեղեկատվություններ հայտերի շտկումների գնահատման վայրի , օրվա և ժամի մասին
3.Տեղեկատվություն գնման առարկայի մասին
4.Տեղեկատվություններ հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ
5.Հանձնաժողովի կայացրած որոշումները

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

**1.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԶՈՐ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1.1** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է չորս անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները ,հետևաբար ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն , հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

**2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԵՐԻ ՇՏԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՅՐԻ ,ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ**

**2.1** Գնման ընթացակարգի հայտերի շտկումները գնահատվել են ք. Արտաշատ Ա.Խաչատրյան 116 հասցեում արձանագրություն 2-ով սահմանված օրը և ժամին `15.04.2026թ. 10:00:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

**3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ**

**3.1** Գնման առարկա է հանդիսանում կոնքազդրային հոդի էնդոպրոթեզի ձեռքբերում :

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

***4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

**4.1** ՕՐԹՈՄԵԴ ՍՊԸ –ն և ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ չեն շտկել անհամապատասխանությունները , մասնավորապես՝ ՕՐԹՈՄԵԴ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է սխալ հավելված 1, հավելված 1.3 չի ներկայացվել , ապրանքի ամբողջական նկարագրում ` ֆիրմային անվանում, ապրանքային նշանը, մակնիշը , արտադրող կազմակերպության անվանումը և տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված , ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը , հավելված 1.3 չի ներկայացվել , ապրանքի ամբողջական նկարագրում ` ֆիրմային անվանում, ապրանքային նշանը, մակնիշը , արտադրող կազմակերպության անվանումը և տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

**5.ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հանձնաժողովը որոշեց

**1.** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունով, հրավերի 8.11 կետի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով ՕՐԹՈՄԵԴ ՍՊԸ –ի և ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի չշտկված հայտերը` ՕՐԹՈՄԵԴ ՍՊԸ –ի և ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել :

**2.** Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 11.1 կետի 4-րդ ենթակետը` 1-16 չափաբաժինները հայտարարել չկայացած` պայմանագիր չի կնքվում հիմքով :

**3.** Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.25 կետը` անգործության ժամկետ սահմանել սույն ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հրապարակելուց հետո 10 օրացուցային օր:

**4.** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը, Գնումներ մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով մասնակիցների` ՕՐԹՈՄԵԴ ՍՊԸ –ի և ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ—չշտկված հայտերը` մասնակիցները խախտել են գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գնման ընթացակարգին տվյալ մասնակիցների հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով օրենքով սահմանված կարգով դիմել լիազոր մարմին` մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում` կողմ-3, դեմ-0*

**Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը**

| | | |
|---|---|---|
| **Նախագահ`** | Ա. Մախտեսյան | |
| **Անդամներ`** | Հ. Սահակյան | |
| | Ս. Գևորգյան | |
| **Քարտուղար`** | Հ. Մկրտչյան | |